Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-715[1]-20.11.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) կայացվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում և սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները.»:

Հոդված 2. Օրենսգրքի 31-րդ հոդվածում.

1. 3-րդ մասի 2-րդ կետում «երեք դատավորի կազմով» բառերը փոխարինել «դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ» բառերով.

2. 3-րդ մասի 3-րդ կետում՝ «դատավորների պարզ մեծամասնության կազմով» բառերը փոխարինել «դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում՝ «արագացված» բառից հետո լրացնել «կամ համաձայնությամբ տուգանք նշանակելու» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 3-րդ մասում «1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «1-ին մասով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 125-րդ հոդվածում.

1. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Գրավատուն վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ներկայացնում է գրավը մուծված լինելը հավաստող փաստաթուղթ, որը կցվում է վարույթի նյութերին: Գրավը կիրառված է համարվում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պահից:».

2. Լրացնել նոր 4.1.-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտականությունը չկատարելը հիմք է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցը վերստին քննարկելու համար:»:

Հոդված 6. Օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 181-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Սույն հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված վարույթներով նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:

Հոդված 8. Օրենսգրքի 206-րդ հոդվածում լրացնել նոր 2.1.-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով քրեական գործը ստանալուց հետո մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման

միջոցի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում հսկող դատախազը համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան:»:

Հոդված 9. Օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են Հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված 10. Օրենսգրքի 261-րդ հոդվածի 7-րդ մասում «1-5-րդ» բառերը փոխարինել «1-6-րդ» բառերով, իսկ «վարույթների» բառից հետո լրացնել «,ինչպես նաև դատական երաշխիքների վարույթների» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 263-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 263. Վարույթի փոխանցումը՝ ըստ ընդդատության

1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե հիմնական դատալսումների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

3. Մինչև վարույթն ըստ ընդդատության փոխանցելը կարող են կատարվել միայն անհետաձգելի վարութային գործողություններ:

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում, դատավորը առարկայական ընդդատության հարցի որոշման համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է դատական վարույթի մասնակիցներին, ովքեր այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:»:

Հոդված 12. Օրենսգրքի 271-րդ հոդվածում լրացնել նոր 3.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Դատական վարույթին ներգրավված և պատշաճ ծանուցված անձանց բացակայությունը խոչընդոտ չէ առաջին ատյանի կարգով իրականացվող վարույթում խափանման միջոցի հարցի քննարկման դատական նիստն անցկացնելու համար, եթե դատարանն այլ բան չի որոշում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 283-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մասից հանել «Եզրափակիչ» բառը, իսկ «դատական» բառը փոխարինել «Դատական» բառով:

Հոդված 14. Օրենսգրքի 285-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «քննիչի» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի» բառերը.

2. 2-րդ մասում և 2-րդ մասի 2-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «(սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի)» բառերը.

3. Լրացնել նոր 10-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված 15. Օրենսգրքի 292-րդ հոդվածում.

1. 3-րդ մասում «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ նույն քրեական վարույթով նույն միջնորդությունը մերժված լինելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ նաև դատարանի համապատասխան որոշման պատճենը:» բառերը.

2. Լրացնել նոր 12-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված 16. Օրենսգրքի 293-րդ հոդվածում լրացնել նոր 3.1.-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված որոշումը դատարանը կայացնում է նաև այն դեպքում, երբ միջնորդության քննության արդյունքով պարզում է, որ նույն քրեական վարույթով նույն միջնորդությունը մերժելուց հետո այն չի հիմնավորվել նոր ի հայտ եկած էական հանգամանքներով կամ վերաբերելի լրացուցիչ նյութերով:»:

Հոդված 17. Օրենսգրքի 295-րդ հոդվածում.

1. Լրացնել նոր 8-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված 18. Օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասում «դեպքի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» բառերը:

Հոդված 19. Օրենսգրքի 302-րդ հոդվածում.

1. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մաս.

«1.1. Եթե մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված որևէ պահանջի, ապա համապատասխան թերությունները մատնանշելով և երեքից վեց օր ժամկետ տրամադրելով, դատարանն այն վերադարձնում է բողոքը ներկայացրած անձին: Դատարանի նշած ժամկետում թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու դեպքում բողոքը համարվում է տրված դրա սկզբնական ներկայացման օրը:».

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2.-րդ մաս.

«1.2. Մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացվում է եռօրյա ժամկետում և անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին:».

3. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.Վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չէ սույն օրենսգրքի 299-րդ կամ 300-րդ հոդվածներով սահմանված որևէ պահանջ կամ, երբ մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը դատարանի սահմանած ժամկետում չի համապատասխանեցվել սույն օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված պահանջներին:»:

Հոդված 20. Օրենսգրքի 311-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հարցը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է քննարկվել առաջնահերթության կարգով:»:

Հոդված 21. Օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասում «փաստաթուղթը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» բառերը:

Հոդված 22. Օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասում «ստորագրում են բոլոր դատավորները» բառերը փոխարինել «կնքվում է, իսկ վերջին էջը ստորագրում են բոլոր դատավորները» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասում.

1. 4-րդ կետի «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով,

2. լրացնել նոր՝ 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ և նույն անձի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված 24. Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):»:

Հոդված 25. Օրենսգրքի 383-րդ հոդվածում.

1.2-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով,

2.2-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ և նույն անձի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված 26. Օրենսգրքի 391-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով.

2. 2-րդ մասը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ և նույն անձի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված 27. Օրենսգրքի 392-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված ժամկետները Վերաքննիչ դատարանի հիմնավորված որոշմամբ կարող են երկարաձգվել համապատասխանաբար՝ ոչ ավել, քան հինգ, տասը և քսան օրով:»:

Հոդված 28. Օրենսգրքի 398-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով.

2.2-րդ մասում լրացնել նոր 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ և նույն անձի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:».

3. 5-րդ մասում «յոթնօրյա» բառը փոխարինել «տասնհինգօրյա» բառով, իսկ «տասնհինգօրյա» բառը «մեկամսյա» բառով:

Հոդված 29. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) մեղադրյալին վերագրվող հանցագործության համար նշանակվել է օրենքով չնախատեսված պատժատեսակ կամ պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել կամ խախտվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված կանոնները.»:

Հոդված 30. Օրենսգրքի 407-րդ հոդվածը լրացնել 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Բացառիկ վերանայման բողոքը, համապատասխան թերությունները մատնանշելով և տասն օրից մեկ ամիս ժամկետ տրամադրելով, վերադարձվում է, եթե բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կամ 406-րդ հոդվածով սահմանված պահանջներին:»:

Հոդված 31. Օրենսգրքում լրացնել նոր 55.2-րդ գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 55.2.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 464.6. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ սկսելու կարգը

1. Սույն օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված կարգով նախաքննությունն ավարտելու դեպքում քննիչը, ստանալով հսկող դատախազի գրավոր համաձայնությունը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով առաջին անգամ հանցանք կատարած և ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղադրվող մեղադրյալին գրավոր ծանուցում է նաև համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հնարավորության և իրավական հետևանքների մասին:

2. Վարույթի նյութերը մեղադրյալի ծանոթացմանը ներկայացնելիս քննիչը ճշտում է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը:

3. Եթե մեղադրյալը չի վիճարկում իրեն ներկայացված մեղադրանքի փաստական հիմքն ու իրավական գնահատականը և պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո կամավոր ցանկություն է հայտնում, որպեսզի դատարանում գործի քննությունն իրականացվի համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի կարգով, ապա քննիչը մեղադրյալի բանավոր միջնորդության հիման վրա կազմում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են նաև մեղադրյալը և նրա պաշտպանը: Արձանագրությունը կցվում է մեղադրական եզրակացությանը:

4. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ նախաձեռնելու արձանագրություն կազմելուց առաջ քննիչն իրավասու է մեղադրյալին հարցեր տալու միջոցով հավաստիանալու, թե արդյոք մեղադրյալը գիտակցում է իր միջնորդության բնույթն ու հետևանքները:

Հոդված 464.7. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ իրականացնելու հիմքը և բացառող հանգամանքները

1. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթն իրականացվում է, եթե առկա է սույն օրենսգրքի 464.6-րդ հոդվածով սահմանված կարգով կազմված և ստորագրված արձանագրություն:

2. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ չի կարող իրականացվել, եթե՝

1) մեղադրյալն անչափահաս է.

2) մեղադրյալը մեղադրվում է մեկից ավելի հանցանքներ կատարելու համար.

3) մեղադրյալին մեղսագրվող արարքի համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով տուգանք պատժատեսակ սահմանված չէ.

4) մեղադրյալին մեղսագրվող արարքով վնաս է պատճառվել մասնավոր անձի շահերին.

5) գույքային հայց է հարուցվել մեղադրյալի կամ այն անձի դեմ, որի վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար.

6) սույն օրենսգրքով սահմանված կարգով մեղադրական եզրակացությունը հաստատելիս հսկող դատախազն իրավական կամ փաստական հիմնավորմամբ առարկել է դրա դեմ, այդ մասին նշում կատարելով մեղադրական եզրակացությունը հաստատելու որոշման մեջ.

7) մեղադրյալը գրավոր հրաժարվել է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելուց.

8) խախտվել է սույն օրենսգրքի 464.6.-րդ հոդվածով սահմանված կարգը:

Հոդված 464.8. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հարցի լուծումը

1. Դատավորը քրեական գործը ստանալուց հետո հավաստիանալով, որ առկա է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հիմքը և բացակայում են սույն օրենսգրքի 464.7.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները, եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթն ստանձնելու և համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ հարուցելու մասին: Հակառակ դեպքում կայացվում է սույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումը:

2. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու մասին որոշումը պետք է բովանդակի տեղեկություններ այն կայացրած դատարանի և դատավորի, քրեական գործը ստանալու և որոշումը կայացնելու օրվա, վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելու, ինչպես նաև դատավճռի կայացման օրվա մասին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումը կայացնելուց հետո՝ երկօրյա ժամկետում, դատավորը դրա պատճենն ուղարկում է հանրային մեղադրողին և վարույթի մասնավոր մասնակիցներին:

4. Դատարանը որոշում է կայացնում համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը դադարեցնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին, եթե ծանոթանալով քրեական գործին հանգում է հետևության, որ՝

1) մեղադրյալին մեղսագրվող արարքն ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ.

2) մեղադրյալին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին.

3) առկա է սույն օրենսգրքի 464.7.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը:

Հոդված 464.9. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթով դատավճիռ կայացնելը

1. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի արդյունքով դատարանը գրավոր ընթացակարգով կայացնում է մեղադրական դատավճիռ սույն օրենսգրքի 347-350-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Դատավճիռը կայացվում է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու մասին որոշումը կայացնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

3. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի արդյունքով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նշանակում է պատիժ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի վերաբերելի դրույթները:

4. Սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարութային ծախսերը մեղադրյալից ենթակա չեն բռնագանձման:

5. Դատավճիռը պետք է պարունակի պարզաբանում այն բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ:

6. Դատավճիռը կայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, ուղարկվում է դատապարտված մեղադրյալին, նրա պաշտպանին, հանրային մեղադրողին:

Հոդված 464.10. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթով դատավճռի բողոքարկման սահմանները

1. Սույն օրենսգրքի 464.9-րդ հոդվածին համապատասխան կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 373-րդ հոդվածով, 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով և 377-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:»:

Հոդված 32.

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Առողջապահության ոլորտի քաղաքականություն մշակող մարմինը սույն օրենքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծը ներկայացնում է Կառավարություն:»:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3) կայացվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում եւ սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները.»:

Հոդված 2. Օրենսգրքի 31-րդ հոդվածում.

1. 3-րդ մասի 2-րդ կետում «երեք դատավորի կազմով» բառերը փոխարինել «դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ» բառերով.

2. 3-րդ մասի 3-րդ կետում՝ «դատավորների պարզ մեծամասնության կազմով» բառերը փոխարինել «դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում՝ «արագացված» բառից հետո լրացնել «կամ համաձայնությամբ տուգանք նշանակելու» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 3-րդ մասում «1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերով» բառերը փոխարինել «1-ին մասով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 125-րդ հոդվածում.

1. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4. Գրավատուն վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ներկայացնում է գրավը մուծված լինելը հավաստող փաստաթուղթ, որը կցվում է վարույթի նյութերին: Գրավը կիրառված է համարվում գրավի մուծված լինելը հավաստող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պահից:».

2. Լրացնել նոր 4.1.-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտականությունը չկատարելը հիմք է մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի տեսակն ընտրելու հարցը վերստին քննարկելու համար:»:

Հոդված 6. Օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձեւը եւ տրամադրման կարգը սահմանում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 181-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Սույն հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված վարույթներով նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:

Հոդված ~~7~~8. Օրենսգրքի 206-րդ հոդվածում լրացնել նոր 2.1.-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով քրեական գործը ստանալուց հետո մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման

միջոցի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում հսկող դատախազը համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան:»:

Հոդված ~~8~~9. Օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1. Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության եւ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաեւ դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են Հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված ~~9~~10. Օրենսգրքի 261-րդ հոդվածի 7-րդ մասում «1-5-րդ» բառերը փոխարինել «1-6-րդ» բառերով, իսկ «վարույթների» բառից հետո լրացնել «,ինչպես նաեւ դատական երաշխիքների վարույթների» բառերը:

Հոդված ~~10~~11. Օրենսգրքի 263-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 263. Վարույթի փոխանցումը՝ ըստ ընդդատության

1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե հիմնական դատալսումների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

3. Մինչեւ վարույթն ըստ ընդդատության փոխանցելը կարող են կատարվել միայն անհետաձգելի վարութային գործողություններ:

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչեւ նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչեւ նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում, դատավորը առարկայական ընդդատության հարցի որոշման համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է դատական վարույթի մասնակիցներին, ովքեր այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական եւ հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:»:

Հոդված ~~11~~12. Օրենսգրքի 271-րդ հոդվածում լրացնել նոր 3.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3.1. Դատական վարույթին ներգրավված եւ պատշաճ ծանուցված անձանց բացակայությունը խոչընդոտ չէ առաջին ատյանի կարգով իրականացվող վարույթում խափանման միջոցի հարցի քննարկման դատական նիստն անցկացնելու համար, եթե դատարանն այլ բան չի որոշում:»:

Հոդված ~~12~~13. Օրենսգրքի 283-րդ հոդվածի վերնագրից եւ 1-ին մասից հանել «Եզրափակիչ» բառը, իսկ «դատական» բառը փոխարինել «Դատական» բառով:

Հոդված ~~13~~14. Օրենսգրքի 285-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «քննիչի» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի» բառերը.

2. 2-րդ մասում եւ 2-րդ մասի 2-րդ կետում «քննիչի» բառից հետո լրացնել «(սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում դատախազի)» բառերը.

3. Լրացնել նոր 10-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«10. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված ~~14~~15. Օրենսգրքի 292-րդ հոդվածում.

1. 3-րդ մասում «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ նույն քրեական վարույթով նույն միջնորդությունը մերժված լինելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ նաեւ դատարանի համապատասխան որոշման պատճենը:» բառերը:

2. Լրացնել նոր 12-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«12. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) ապացուցողական գործողություն կատարելու կամ գաղտնի քննչական գործողության ժամկետը երկարաձգելու վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված ~~15~~16. Օրենսգրքի 293-րդ հոդվածում լրացնել նոր 3.1.-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված որոշումը դատարանը կայացնում է նաեւ այն դեպքում, երբ միջնորդության քննության արդյունքով պարզում է, որ նույն քրեական վարույթով նույն միջնորդությունը մերժելուց հետո այն չի հիմնավորվել նոր ի հայտ եկած էական հանգամանքներով կամ վերաբերելի լրացուցիչ նյութերով:»:

Հոդված ~~16~~17. Օրենսգրքի 295-րդ հոդվածում.

1. Լրացնել նոր 8-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«8. Դատախազի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը մերժելու մասին, եթե համապատասխան վարույթը չի հարուցվել,

2) սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթը կարճելու մասին, եթե համապատասխան վարույթը հարուցվել է:»:

Հոդված ~~17~~18. Օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասում «դեպքի» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» բառերը:

Հոդված ~~18~~19. Օրենսգրքի 302-րդ հոդվածում.

1. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1.-ին մաս.

«1.1. Եթե մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված որեւէ պահանջի, ապա համապատասխան թերությունները մատնանշելով եւ երեքից վեց օր ժամկետ տրամադրելով, դատարանն այն վերադարձնում է բողոքը ներկայացրած անձին: Դատարանի նշած ժամկետում թերությունները վերացնելու եւ կրկին ներկայացնելու դեպքում բողոքը համարվում է տրված դրա սկզբնական ներկայացման օրը:».

2. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.2.-րդ մաս.

«1.2. Մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացվում է եռօրյա ժամկետում եւ անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին:».

3. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.Վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չէ սույն օրենսգրքի 299-րդ կամ 300-րդ հոդվածներով սահմանված որեւէ պահանջ կամ, երբ մինչդատական ակտի վերաբերյալ բողոքը դատարանի սահմանած ժամկետում չի համապատասխանեցվել սույն օրենսգրքի 301-րդ հոդվածով սահմանված պահանջներին:»:

Հոդված ~~19~~20. Օրենսգրքի 311-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հարցը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է քննարկվել առաջնահերթության կարգով:»:

Հոդված ~~20~~21. Օրենսգրքի 355-րդ հոդվածի 2-րդ մասում «փաստաթուղթը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» բառերը:

Հոդված 22. Օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասում «ստորագրում են բոլոր դատավորները» բառերը փոխարինել «կնքվում է, իսկ վերջին էջը ստորագրում են բոլոր դատավորները» բառերով:

Հոդված ~~21~~23. Օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասում.

1. 4-րդ կետի «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով,

2. լրացնել նոր՝ 5-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ եւ նույն անձի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված ~~22~~24. Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Վճռաբեկ բողոքին կցվում է նաեւ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):»:

Հոդված ~~23~~25. Օրենսգրքի 383-րդ հոդվածում.

1.2-րդ մասի 4-րդ կետում~~ի~~ «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով,

2.2-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ եւ նույն անձի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված ~~24~~26. Օրենսգրքի 391-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի 4-րդ կետում~~ի~~ «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով.

2. 2-րդ մասը լրացնել 5-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ եւ նույն անձի վերաբերյալ վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:»:

Հոդված ~~25~~27. Օրենսգրքի 392-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված ժամկետները Վերաքննիչ դատարանի հիմնավորված որոշմամբ կարող են երկարաձգվել համապատասխանաբար՝ ոչ ավել, քան հինգ, տասը եւ քսան օրով:»:

Հոդված ~~26~~28. Օրենսգրքի 398-րդ հոդվածում.

1.2-րդ մասի 4-րդ կետում~~ի~~ «:» կետադրական նշանը փոխել «.» կետադրական նշանով.

2.2-րդ մասում լրացնել նոր 5-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5) բողոքում նշված հիմքով, նույն դատական ակտի առնչությամբ եւ նույն անձի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:».

3. 5-րդ մասում «յոթնօրյա» բառը փոխարինել «տասնհինգօրյա» բառով, իսկ «տասնհինգօրյա» բառը «մեկամսյա» բառով:

Հոդված ~~27~~29. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1) մեղադրյալին վերագրվող հանցագործության համար նշանակվել է օրենքով չնախատեսված պատժատեսակ կամ պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել կամ խախտվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 74-րդ եւ 75-րդ հոդվածներով սահմանված կանոնները.»:

Հոդված ~~28~~30. Օրենսգրքի 407-րդ հոդվածը լրացնել 2.1-ին մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Բացառիկ վերանայման բողոքը, համապատասխան թերությունները մատնանշելով եւ տասն օրից մեկ ամիս ժամկետ տրամադրելով, վերադարձվում է, եթե բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կամ 406-րդ հոդվածով սահմանված պահանջներին:»:

Հոդված ~~29~~31. Օրենսգրքում լրացնել նոր 55.2-րդ գլուխ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 55.2.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 464.6. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ սկսելու կարգը

1. Սույն օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված կարգով նախաքննությունն ավարտելու դեպքում քննիչը, ստանալով հսկող դատախազի գրավոր համաձայնությունը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով առաջին անգամ հանցանք կատարած եւ ոչ մեծ ծանրության հանցագործության համար մեղադրվող մեղադրյալին գրավոր ծանուցում է նաեւ համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հնարավորության եւ իրավական հետեւանքների մասին:

2. Վարույթի նյութերը մեղադրյալի ծանոթացմանը ներկայացնելիս քննիչը ճշտում է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը:

3. Եթե մեղադրյալը չի վիճարկում իրեն ներկայացված մեղադրանքի փաստական հիմքն ու իրավական գնահատականը եւ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո կամավոր ցանկություն է հայտնում, որպեսզի դատարանում գործի քննությունն իրականացվի համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի կարգով, ապա քննիչը մեղադրյալի բանավոր միջնորդության հիման վրա կազմում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են նաեւ մեղադրյալը եւ նրա պաշտպանը: Արձանագրությունը կցվում է մեղադրական եզրակացությանը:

4. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ նախաձեռնելու արձանագրություն կազմելուց առաջ քննիչն իրավասու է մեղադրյալին հարցեր տալու միջոցով հավաստիանալու, թե արդյոք մեղադրյալը գիտակցում է իր միջնորդության բնույթն ու հետեւանքները:

Հոդված 464.7. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ իրականացնելու հիմքը եւ բացառող հանգամանքները

1. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթն իրականացվում է, եթե առկա է սույն օրենսգրքի 464.6-րդ հոդվածով սահմանված կարգով կազմված եւ ստորագրված արձանագրություն:

2. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ չի կարող իրականացվել, եթե՝

1) մեղադրյալն անչափահաս է.

2) մեղադրյալը մեղադրվում է մեկից ավելի հանցանքներ կատարելու համար.

3) մեղադրյալին մեղսագրվող արարքի համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով տուգանք պատժատեսակ սահմանված չէ.

4) մեղադրյալին մեղսագրվող արարքով վնաս է պատճառվել մասնավոր անձի շահերին.

5) գույքային հայց է հարուցվել մեղադրյալի կամ այն անձի դեմ, որի վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար.

6) սույն օրենսգրքով սահմանված կարգով մեղադրական եզրակացությունը հաստատելիս հսկող դատախազն իրավական կամ փաստական հիմնավորմամբ

առարկել է դրա դեմ, այդ մասին նշում կատարելով մեղադրական եզրակացությունը հաստատելու որոշման մեջ.

7) մեղադրյալը գրավոր հրաժարվել է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելուց.

8) խախտվել է սույն օրենսգրքի 464.6.-րդ հոդվածով սահմանված կարգը:

Հոդված 464.8. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հարցի լուծումը

1. Դատավորը քրեական գործը ստանալուց հետո հավաստիանալով, որ առկա է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու հիմքը եւ բացակայում են սույն օրենսգրքի 464.7.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները, եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթն ստանձնելու եւ համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ հարուցելու մասին: Հակառակ դեպքում կայացվում է սույն օրենսգրքի 310-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումը:

2. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու մասին որոշումը պետք է բովանդակի տեղեկություններ այն կայացրած դատարանի եւ դատավորի, քրեական գործը ստանալու եւ որոշումը կայացնելու օրվա, վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելու, ինչպես նաեւ դատավճռի կայացման օրվա մասին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումը կայացնելուց հետո՝ երկօրյա ժամկետում, դատավորը դրա պատճենն ուղարկում է հանրային մեղադրողին եւ վարույթի մասնավոր մասնակիցներին:

4. Դատարանը որոշում է կայացնում համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը դադարեցնելու եւ նախնական դատալսումներ նշանակելու մասին, եթե ծանոթանալով քրեական գործին հանգում է հետեւության, որ՝

1) մեղադրյալին մեղսագրվող արարքն ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ.

2) մեղադրյալին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին.

3) առկա է սույն օրենսգրքի 464.7.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքներից որեւէ մեկը:

Հոդված 464.9. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթով դատավճիռ կայացնելը

1. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի արդյունքով դատարանը գրավոր ընթացակարգով կայացնում է մեղադրական դատավճիռ սույն օրենսգրքի 347-350-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Դատավճիռը կայացվում է համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ կիրառելու մասին որոշումը կայացնելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

3. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի արդյունքով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նշանակում է պատիժ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի վերաբերելի դրույթները:

4. Սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարութային ծախսերը մեղադրյալից ենթակա չեն բռնագանձման:

5. Դատավճիռը պետք է պարունակի պարզաբանում այն բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ:

6. Դատավճիռը կայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, ուղարկվում է դատապարտված մեղադրյալին, նրա պաշտպանին, հանրային մեղադրողին:

Հոդված 464.10. Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթով դատավճռի բողոքարկման սահմանները

1. Սույն օրենսգրքի 464.9-րդ հոդվածին համապատասխան կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 373-րդ հոդվածով, 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով եւ 377-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:»:

Հոդված 30~~1~~2.

1.Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Առողջապահության ոլորտի քաղաքականություն մշակող մարմինը սույն օրենքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծը ներկայացնում է Կառավարություն:»:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օր:

~~**Հոդված 30.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-715-20.11.2023-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-715[1]-20.11.2023-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-715[2]-20.11.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով ամրագրված սկզբունքները կիրառելի չեն համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթում: «Սկզբունք» հասկացությունը իրավունքի տեսությունը բնորոշում է որպես ելակետային դրույթ, հիմնարար գաղափար, որն արտահայտում է իրավունքի էությունը, պայմանավորված է իրավունքով կարգավորվող	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			հասարակական հարաբերությունների էությամբ և որոշիչ դեր է խաղում իրավական նորմերի ստեղծման, կիրառման և մեկնաբանման փուլերում: Այս ընդհանրական բնորոշումը հատուկ է նաև պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Օրենսդիրն ամրագրել է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները: Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը իրենից ներկայացնում է քրեադատավարական պարզեցված ընթացակարգ, որն իրականացվում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝ 1) հանրային մեղադրանքի կարգով հետապնդվող քրեական գործը ոչ մեծ ծանրության է,		

			2) մեղադրյալը պետք է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետի իմաստով առաջին անգամ կատարած լինի հանցանք, 3) անձը պետք է նախաքննության փուլում, պաշտպանի ներկայությամբ ընդունի առաջադրված մեղադրանքը և տա իր համաձայնությունը սույն վարույթի կարգով գործը քննելու վերաբերյալ, 4) վարույթի կիրառումը բացառվում է այն գործերով, որոնցով մեղադրյալին մեղսագրվող արարքով վնաս է պատճառվել մասնավոր անձի շահերին, 5) դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման մեջ դիրքորոշում է հայտնել քրեական գործը սույն վարույթի կարգով քննելու վերաբերյալ, 6) դատարանը ստանալով համապատասխան քրեական գործը և հավաստվելով, որ առկա են սույն վարույթի կիրառման հիմքերը ու պայմանները եռօրյա ժամկետում պետք է որոշում կայացնի քրեական գործի վարույթը ստանձնելու և համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ հարուցելու մասին, 7) վարույթը հարուցելու որոշման մեջ պետք է նշում կատարվի այն գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին՝ սահմանելով դատավճռի		

			կայացման օրը, 8) սույն վարույթի կիրառման արդյունքում գրավոր ընթացակարգով կայացվում է մեղադրական դատավճիռ, որով անձի նկատմամբ նշանակվում է հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանքի նվազագույն չափը, 9) դատավճիռը կայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, ուղարկվում է դատապարտված մեղադրյալին, նրա պաշտպանին, հանրային մեղադրողին: Կայացված դատավճռի բողոքարկման հիմքերը սահմանափակ են: Դատավճիռը ուժի մեջ է մտնում ընդհանուր կարգով և ուղարկվում է կատաման: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ համաձայանությամբ տուգանք նշանակելու վարույթը որոշակի առանձնահատկություններ ունեցող քրեադատավարական ընթացակարգ է, որի արդյունքում կայացվող դատավճիռը և նշանակվող պատիժը պետք է համապատասխանեն օրենքով սահմանված պահանջներին: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ոչ		

			մեծ ծանրության ավարտված կամ չավարտված հանցագործություններով համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի դեպքում նշանակվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանքի նվազագույն չափը՝ առանց լրացուցիչ պատիժ և անվտանգության միջոց նշանակելու:»: Այս կարգավորման շրջանակում նախատեսվող տուգանքը ոչ թե հանդիսանում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքից շեղում, այլ դիտարկվում է որոշակի պայմանների միաժամանակյա առկայությամբ այն արդարացի պատիժը, որը նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով: Հետևաբար առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող լրացումը հանել:		
2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ **Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			3-րդ հոդվածի 1-ին կետում և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված «լրացնել» բառն առաջարկում ենք գրել մեծատառով, որպես նոր սկսվող նախադասություն:		
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասից առաջարկում ենք հանել «Ոչ մեծ ծանրությամբ» բառերը, քանզի «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) 29-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) նոր շարադրվող 464.6-րդ հոդվածի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			համաձայն համաձայնությամբ տուգանքը նշանակելու վարույթի առարկան են կազմում բացառապես հանրային մեղադրանքի կարգով հետապնդվող ոչ մեծ ծանրության քրեական գործերը: Այս համատեքստում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասում «Ոչ մեծ ծանրությամբ» բառերի նախատեսումը համարում ենք ավելորդ:		
4.	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը հստակեցնելու և ցանկում ոչ կոռուպցիոն բնույթի հանցանքների նախատեսումը բացառելու նպատակով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ում՝ 1) «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինել «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով: 2) «Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանվորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ, երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)», 3) «Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ, երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)»:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	Նախագծի եզրափակիչ և	Նախագծի 6-րդ հոդվածով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		անցումային դրույթներ	նախատեսվում է՝ «Վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը:»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ	Կատարվել է համապատասխան փոփոխություն	

			իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք նախատեսել համապատասխան կարգավորումները Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող ենթաօրենսդրական ակտի ընդունման ժամկետի և նրա ընդունման հետ կապված նորմերի գործողության առանձնահատկությունների վերաբերյալ:		
2.	Կառավարություն	Նախագծի 23-24-րդ և 26-րդ հոդվածներ	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ» թվից առաջ առաջարկում ենք լրացնել «2-րդ մասի» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված փոփոխությունը ըստ էության կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում: Նույն դիտարկումը վերաբերում է նաև Նախագծի 24-րդ և 26-րդ հոդվածների 1-ին մասերին:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
3.	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված փողերի լվացմանն առնչվող վարույթով և փողերի լվացմանը նախորդող ոչ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			կոռուպցիոն բնույթի հանցանքի վերաբերյալ իրականացվող վարույթով մասնագիտացված և համակողմանի քննություն իրականացնելու հրավորությունն ապահովելու համար առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով. «6.1. Սույն հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված վարույթներով նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:		
	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	Հաշվի առնելով մեծածավալ դատական ակտերի և հատկապես կոլեգիալ կազմով գործը քննելու արդյունքում կայացված դատական ակտերի պարագայում յուրաքանչյուր էջը ստորագրելու պահանջի ժամանակատարությունը և աննպատակահարմարությունը՝	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասում «ստորագրում են բոլոր դատավորները» բառերը փոխարինել «կնքվում է, իսկ վերջին էջը ստորագրում են բոլոր դատավորները» բառերով:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված 2-րդ» «օրենսգրքի» բառը և «հետևյալ խմբագրությամբ» բառերը հանել:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: (...)»:		